Հիմնավորում

Մասիս քաղաքային համայնքի ավագանու 24.12.2020թվականի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 171-Ն որոշմանը կից թիվ 2, 3 և 4 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունման

1. **Մասիս քաղաքային համայնքի 2021 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2021 թվականի համայնքի բյուջեում փոփոխությունները պայմանավորված է 2021 թվականի բյուջեն հաստատելուց հետո ծախսային մասերում առաջացած մի շարք խնդիրներով, ինչպես նաև նոր ծրագրերի իրականացման համար բյուջեի համապատասխան ծրագրերում ֆինանսական միջոցներ նախատեսելու անհրաժեշտությամբ:

2. **Առկա խնդիրների նկարագրությունը**

''Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում'' ՀՈԱԿ-ի կողմից իր գործունեության ընթացքում առաջացող վտանգավոր թափոնների անձնագրեր ձեռք բերելու և լիազոր մարմնի համաձայնեցմանը ներկայացնելու, ինչպես նաև աղբահանության գործունեություն իրականացնելու համար լիցենզիա ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ է '' Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում'' ՀՈԱԿ-ին հատկացնել 1800,0 հազար դրամ սուբսիդիա:

Մասիս քաղաքի 6-րդ թաղամասի 2-րդ փողոցը կենտրոնական ճանապարհին միացնող հատվածի որոշակի տարածքում՝ մոտ 180 մետր երկարությամբ փողոցը քանդվել դարձել է անանցանելի, քաղաքացիների համար ստեղծել անհարմար վիճակ և բնակիչները ստիպված քայլում են սեփականաշնորհված հողամասերի տարածքով: Ճանապարհի ընթացիկ նորոգման համար անհրաժեշտ է բյուջեից հատկացնել 950 000 դրամ:

Քաղաքապետարանի վարչական շենքի 3-րդ և 4-րդ հարկերի հիմնանորոգման հետ կապված ավելացել է ընթացիկ տարվա էլեկտրաէներգիայի ծախսը, որի հետևանքով նախատեսված միջոցները չեն բավարարի մինչև տարեվերջ վճարում կատարելու համար: Առաջարկվում է քաղաքապետարանի էներգետիկ ծախսերը ծածկելու համար լրացուցիչ հատկացնել 1000 000 դրամ:

Մասիս քաղաքային համայնքում փողոցների գիշերային լուսավորման ցանցի ընդլայնման պատճառով տարվա համար նախատեսված միջոցները չեն բավարարում էներգետիկ ծախերի վճարմանը: Առաջարկվում է մինչև տարեվերջ ծախսերը ծածկելու համար փողոցների լուսավորման էներգետիկ ծախսերին լրացուցիչ հատկացնել 1 000 000 դրամ:

''Մասիսի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' ՀՈԱԿ-ում գործող ''Մասիսի նոր սերունդ'' թատերախումբը ''Մինորա մշակութային կենտրոն''-ի կողմից հրավեր է ստացել մասնակցելու հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 2-ը Վրաստանում կայանալիք ''Գլոբալ ֆեստ'' միջազգային մշակութային փառատոնին: Փառատոնին մասնակցելու համար ՀՈԱԿ-ի տնօրինությունը դիմել է քաղաքապետարանին գործուղման ծախսերին աջակցելու նպատակով հատկացնել 500 000 դրամ: Առաջարկվում է ''Մասիսի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն'' ՀՈԱԿ-ին լրացուցիչ սուբսիդիա հատկացնել 500000 դրամի չափով:

Մասիս քաղաքային համայնքում կուլտուր-մշակութային կյանքի բարելավմանն ուղված միջոցառում անցկացնելու նպատակով, համայնքի պատանի հանդիսատեսի համար թատերական ներկայացում հրավիրելու համար առաջարկվում է բյուջեի մշակութային միջոցառումների ծառայությունների ձեռք բերմանը հատկացնել 500 000 դրամ:

2017 թվականին մեկնարկած համայն հայության հոգևոր սրբավայր Մայր Տաճարի հիմնանորոգման համար 2019թ. կազմակերպված դրամահավաքին մասնակցության համար Հայ Առաքելական եկեղեցու Մասյացոտնի թեմի առաջնորդը դիմել է առաջարկությամբ՝ ականջալուր լինելու ''Եկեք կառուցենք լույսի Սուրբ Խորանը'' կոչին: Առաջարկվում է Մայր Տաճարի հիմնանորոգմանը մեր ներդրումն ունենալու համար համայնքի բյուջեից կատարել 500 000 դրամ նվիրատվություն:

2021 թվականի բյուջեի վարչական մասում առաջարկված ծախսերի իրականացման համար անհրաժեշտ է պահուստային ֆոնդից հատկացնել 6250 000 դրամ:

''Մասիս քաղաքի թիվ 2 մանկապարտեզ'' ՀՈԱԿ-ի կոյուղագիծը վթարված է և չի գործում: Կոյուղագծի հիմնանորոգման համար անհրաժեշտ է ձեռք բերել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաթեթ, որի համար առաջարկվում է ֆոնդային բյուջեի ''Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ'' դասակարգումով նախատեսված ''Վարչական սարքավորումներ'' հոդվածից հատկացնել 350 000 դրամ: